ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՍՏՈՐՋՐՅԱ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՐՇԱՎ 10-24 հուլիսի, 2012թ

2012թ.-ի հուլիսի 10-ից 24-ը կիրականացվի Սևանա լճի ստորջրյա ավազանի գիտահետազոտական երրորդ արշավը, կշարունակվեն 2010 և 2011թթ-ի գիտարշավների աշխատանքները, որոնց արդյունքները բավականին հուսադրող էին հայ գիտնականների համար : Ֆրանս-հայկական այս առաքելությունը իրականացվում է ծրագրի երեք կրողներ Կլոդ Թուլումջյանի (նախաձեռնող), Գաբրիել Մելիքյանի և Ստեփան Կոջայանի, ինչպես նաև ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիային կից գիտահետազոտական ինստիտուտների և պետական մարմինների սերտ համագործակցությամբ, որոնք աշխատում են Սևանա լճին առնչվող հարցերի շուրջ:

Այսուհետ այս գիտարշավները կիրականացվեն վերջերս հիմնադրված Ստորջրյա հետազոտությունների և սուզումների հայկական կենտրոնի (ՍՀՍՀԿ) պատասխանատվության ներքո՝ նախագահ Կլոդ Թուլումջյանի և փոխնախագահ Արա Ավագյանի գլխավորությամբ:

Ստորջրյա այս ուսումնասիրությունների նպատակն է ամրապնդել անցյալ տարիներին ձեռք բերված նախնական արդյունքները, ինչպես նաև շարունակել գիտնականների համար նմուշների (ջուր, գազ, նստվածքներ, տիղմ), տեսաֆիլմերի և լուսանկարների ձեռքբերման աշխատանքները, ֆաունայի հաշվառումները (ձկներ, խեցգետիններ) և ֆլորայի նկարագրությունը, ստանալ այլ տեղագրական տվյալներ, որոնք կարող են ծառայել ստորջրյա հնագիտական պեղումների կամ երկրաբանական ուսումնասիրություններին, իրականացնել հոսանքների չափումներ և բացահայտել ստորջրյա աղբյուրներ…

Ծրագիրը առնչվում է հետևյալ բնագավառներին՝ հիդրոերկրաբանություն, ձկնաբուծություն, երկրաբանական գիտություններ, բնապահպանություն, հնագիտություն և ազգագրություն, քարանձավագիտություն և պատմություն:

Այս տարի հնագիտական աշխատանքներ կտարվեն Սևանա լճի հատակում՝ 15մ խորության վրա հայտնաբերված վթարված նավի բացահայտման ուղղությամբ :

Ձեռբերված բոլոր տարրերը կտրամադրվեն հայ գիտնականներին՝ հետագա հետազոտությունների նպատակով : Դրանց ուսումնասիրության արդյունքները անմիջականորեն կապված են քաղցրահամ ջրի այս ջրավազանի էկոլոգիական հավասարակշռության հետ, որն ունի մեծ ռազմավարական նշանակություն ազգային, հատկապես տարածաշրջային կարևորություն:

Տարված աշխատանքներից հետո տեղի բնակիչները ավելի տեղեկացված կլինեն Սևանա լճի մասին, ինչպես նաև նյութեր կտրամադրվեն թանգարաններին, մասնավորապես Սևան Ազգային պարկի թանգարանին, որն աջակցում է մեր գիտարշավների իրականացմանը :

Լրացուցիչ տեղեկություններ՝ սույն նամակին կից փաստաթղթում:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝

Էլինա Հովսեփյան (+374) 098.80.60.14 – ellina_99@yahoo.fr
Արա Նավոյան (+374) 093.13.19.80 – avagn@yahoo.fr
Ստեփան Կոջայան (+374) 098.42.39.59 – stephane.kojayan@hotmail.fr
Կլոդ Թուլումջյան (+374) 077.105.109 – touloumdjian.cl@wanadoo.fr

* * *